բաբերուեցան ամենեքեան դէպի մեր ազգի Հայրապետը։

Պարոն Լալայեան եղբարք Զամախում ապրել են միասին. այնտեղ ունին շատ հոյակապ տներ, քարվանսարաներ, բաղանիք, և քաղաքից դուրս՝ գաւառներում՝ շատ անչափ կալուածքներ և երկու նշանաւոր գիւղ իրանց ընակիչներով, որք են Ղարաջալլի և Արաբ Սարուն. ունեն նաեւ ջրաղացներ, վարելահողեր, արօտատեղեր, այգիներ, ամարանոցներ, ձմերանոցներ, նժոյգ ձիաներ, ջոկեր, անդէաներ, ոչխարի հօտեր, և բազմաթիւ ծառաներ։ Ամենայն օր հայկերոյթներ, խնջոյքներ, եկեղեր և թէ ընիկ հիւրեր անպակաս են եղել և լինում են միշտ պարոն Լալայեանց տանը։

Հիւրասիրուել են դոցա տանը՝ մեծ իշխան թագաւորազներ, որպէս և Միխայէլ Նիկոլայեվիչը, — որ իւր շնորհակալութեան միջոցին ասել է. «Ես Ձեր մշտական հիւրն եմ» — պարսից Նասրէտտին շահը[1]), տէրութեան մեծամեծ պաշտօնեաներ, սինոդականներ, նահանգապետներ, տէրութեան աստիճանաւորներ և այլն։

Մինչեւ ցայսօր եւս նոյն սարք ու կարգը պահպանվում են Զամախում և Բաղուում Լալայեանց տան տոհմի մէջ, որի պարագլուխն է այժմ այն տեղ Զամախի՝ աստիճանաւոր, ազնուական Ալէքսանդր Աթանասեան Լալայեանցն։ Ցիշեալ ազնուական պարոնը 1885 թ. հանգուցեալ Մակար Կաթուղիկոսի և 1892 թ ներկայ Մկրտիչ Սրբազնագոյն Կաթուղիկոսի՝ սիրեցեալ Հայրիկի՝ ընտրութեան ժամանակ, թեմի կողմից աշխարհական պատգամաւոր է գնացած Ս. Էջմիածին։

1871 թ. նոյն Ալէքսանդր ազան թագաւոր Կայսեր Ալէքսանդր II ի Կովկաս գալու ժամանակ՝ Զամախայ քաղաքի կողմից պատգամաւոր է գնացել Տփխիս, որի մասին արժանացել է Սանիսլաւի 3րդ աստիճանի և արծաթեայ մեդալի ի նշան Կայսեր այցելութեան Կովկասու։

1873 թ. պարսից շահը հիւրասիրուել է Զամախում պ.

---

[1]) Նոյն 1896 թուի ապրիլի 19ին սպանեցին Նասրէտտին շահին և թագաւորից նորա որդի Մուզաֆէրէտտին շահը։